ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.01.2012թ.
151-ի 1

ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի նախագահ
պարոն Արտակ Շաբոյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Շաբոյան,

Դեկտեմբերի 16-ին “Աշտարակ կաթ”, “Դուստր Մարիաննա” եւ “Անի կաթ” ընկերությունները տուգանվեցին տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ) կողմից՝ կաթնամթերքում արգելված հավելանյութ օգտագործելու եւ սխալ մակնշման համար:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Դադարեցրե՞լ են արդյոք նշված ընկերությունները կաթնամթերքի արտադրության մեջ արգելված հավելանյութերի օգտագործման պրակտիկան:
2. Ե՞րբ է ՏՄՊՊՀ-ն իրականացնելու կրկնակի ստուգում կաթնամթերք արտադրող վերոնշյալ ընկերություններում:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Նախագահ՝ Շուշան Դոյդոյան